ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--------- 2024 թվականի №-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի №285-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 8-ի «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի կանխավճարային և հետվճարային հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի արխիվների պահպանման ստանդարտներ սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №285-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սահմանել, որ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայություններ մատուցողը (այսուհետ՝ Օպերատոր) հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) կնքման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում սկսում է վարել փաստաթղթային և էլեկտրոնային կամ միայն էլեկտրոնային բազա, որը ներառում է Պայմանագրի տեսաներածված պատճենը, իսկ Օպերատորի գործառնական գրասենյակում կամ Օպերատորի

կայքի կամ հավելվածի միջոցով էլեկտրոնային եղանակով Պայմանագրի կնքման դեպքում՝ Պայմանագրի էլեկտրոնային բնօրինակը:».

2) Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 1.2-րդ, 1.3-րդ և 1.4-րդ կետերով.

«1.2. Օպերատորը, նախքան սույն որոշման 1-ին կետում նշված կայքի կամ հավելվածի գործարկումը, տվյալ կայքի կամ հավելվածի տեխնիկական նախագիծը (նկարագիրը), իսկ հետագայում նաև դրանում կատարվելիք փոփոխությունները նախապես համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ: Սույն կետում նշված տեխնիկական նախագիծը (նկարագիրը) պետք է առնվազն նախատեսի Օպերատորի կողմից բաժանորդի նույնականացման նպատակով Բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների հետ համադրման ընթացակարգ:

1.3. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սույն որոշման 1.2-րդ կետում նշված տեխնիկական նախագիծը (նկարագիրը) կամ դրանում կատարվելիք փոփոխությունները Օպերատորից ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում այն տրամադրում է ազգային անվտանգության ոլորտի իրավասու մարմնին:

1.4. Հանձնաժողովը սույն որոշման 1.2-րդ կետով նախատեսված համաձայնեցման վերաբերյալ դիրքորոշումը հայտնում է ազգային անվտանգության ոլորտի իրավասու մարմնի դիրքորոշումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:».

3) Որոշման տեքստում «Օպերատորների» բառը փոխարինել «Օպերատորի» բառով,

4) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Պայմանագրի կնքման վայրի (սպասարկման կետի հասցեն), իսկ Պայմանագիրն Օպերատորի կայքի կամ հավելվածի միջոցով կնքման դեպքում՝ դրա կնքման եղանակի մասին նշումը, կնքման ամսաթիվը.».

5) Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Օպերատորի կողմից սույն որոշման 1-ին կետի համաձայն վարվող էլեկտրոնային բազան ներառում է սույն որոշման 2-րդ կետով սահմանված տվյալները, բացառությամբ ստորագրությունների և լիազորագրի պատճենի,

ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդի կողմից նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում՝ հաշվառման (բնակության վայրի) հասցեի, իսկ Օպերատորի կայքի կամ հավելվածի միջոցով Պայմանագրի կնքման դեպքում՝ նաև սույն որոշման 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված տվյալների:».

6) Որոշման 6-րդ կետից հանել «Ընդունել ի գիտություն, որ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
----- 2024թ.